ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/72

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Ֆայնթեք» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Կ. Դավթյանի, Ս. Պետրոսյանի, Մ. Գրիգորյանի, Մ. Մկրտչյանի
«Ֆայնթեք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Ներսիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆայնթեք» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 20.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված թիվ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին «Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 20.04.2022թ.-ին:

21.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/72 համարի ծածկագիրը:

29.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. <u>«Ֆայնթեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆայնթեք» ՍՊԸ-ն 20.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻ4ԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կարիքների համար ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.04.2022 թվականին հրապարակել է թիվ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» գնանշման հարցման ընթացակարգը (այսուհետ նաև ընթացակարգ):

1.2. Ընթացակարգի հրավերով հայտերի բացման և հայտերի ներկայացման համար ժամկետ է սահմանվել միևչն 20.04.2022 թվականին ժամը 16:00-ին:

1.3. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4.1-րդ կետով սահմանվել է նաև հետևյալը.

Հ/Հ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների չափանիշներ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների գնահատման (չափման) առավելագույն միավորներ	Գնահատման համար սահմանված պահանջներ
1	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ) - 100 միավոր		
	այդ թվում		
1.1	**Մասնակցի նմանատիպ փորձառություն (ՏԱ1)**	32 միավոր	Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ, Մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող **3 տարիների** ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է **առողջապահության ոլորտում նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման** առնվազն **մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից:**
1.2	**Մասնակցի նմանատիպ փորձառություն (ՏԱ2)**	20 միավոր	Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ, Մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող **3 տարիների** ընթացքում պատշաճ ձևով **իրականացրել է իրական ժամանակում գործող նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման** առնվազն **մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի քսան տոկոսից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է փնեն օբյեկտիվորեն հիմնավորված ն համարժեք լինեն սդև կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական ն համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: հրումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Վերոնշյալները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի խախտումներ, քանի որ գնման ընթացակարգի հրավերով Պատվիրատուի կողմից ըստ էության սահմանվել է այնպիսի որակավորման չափանիշներ, որոնք խտրական են, չեն բխում օրենքի սկզբունքներից, հավասար պայմաններ չեն ապահովում և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների այդ թվում և մեր կազմակերպության համար: Մասնավորապես, խնդրում ենք ուշադրություն դարձնել հրավերով սահմանված այն դրույթին, որ հնարավոր մասնակիցը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում պատշաճ ձևով պետք է իրականացրած լինի առողջապահության ոլորտում նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի սպասարկման առնվազն մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջը ոչ իրավաչափ է, հակասում է վերոնշյալ իրավական նորմերի դրույթներին, քանի որ «առողջապահության ոլոտում» և «մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից» պահանջները խտրական են, այն պատճառաբանությամբ, որ չի հիմնավորվում, թե պատվիրատու կողմից ինչու է պետք որ լինի առողջապահական ոլորտում իրականացված, այլ ոչ թե պետական կառավարման ոլորտում: Կարծում ենք, այս պահանջը իրավաչափ չէ, քանի որ դուրս է մղվում նմանատիպ պայմանագրերի մասնավոր հատվածի հետ կատարված լինելու պահանջը, միաժամանակ չի սահմանափակվում ոլորտային առումով: Ինչ վերաբերում է այն դրույթին, որ պետք է ներկայացվի մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից, ապա այս մասով, գտնում ենք, որ իրավաչափ կլիներ սահմանել ոչ թե մեկ պայմանագրի շրջանակում հիսուն տոկոսի ապահովում, այլ գոնե երկու կամ երեք պայմանագրի շրջանակներում հիսուն տոկոսի ապահովում: Այս պարագայում կխրախուսվի մրցակցությունը և ավելի կընդլայնվի

հնարավոր մասնակիցների մասնակցությունը: Նմանատիպ պահանջ է սահմանվել նաև աղյուսակի 1.2 կետով, որը նույնանման է վերը նշվածին:

Գտնում ենք, որ հրավերի 1-ին մասով սահմանված պահանջները օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ինչի արդյունքում խախտվում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերը նշված պահանջները:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված թիվ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

«Ֆայնթեք» ՍՊԸ-ն 04.05.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

««ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կարիքների համար ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.04.2022 թվականին հրապարակել է թիվ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» գնանշման հարցման ընթացակարգը (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով հայտերի բացման և հայտերի ներկայացման համար ժամկետ է սահմանվել մինչև 20.04.2022 թվականին ժամը 16:00-ին:

«ՖԱՅՆԹԵՔ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2022 թվականին ներկայացվել է բողոք, որով վիճարկվում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմանները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, Օրենքի 13-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետով սահմանված պահանջների խախտված լինելու հանգամանքը:

Որպես վերոնշյալի ապացույց, հայտնում ենք Ձեզ այն մասին, որ armeps.am հակակարգով ավտոմատ կերպով ցույց է տալիս այն մասնակիցների հայտերը, որոնք մասնակցել են բողոքարկվող գնման ընթացակարգին:

Եվ այսպես, ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28 ծածկագրով ընթացակարգին դիմել է միայն մեկ ընկերություն: Այս պարագայում ակնհայտ է դառնում, որ գնման ընթացակարգի հրավերը խտրական է եղել, ինչի արդյունքն է մեկ մասնակցի կողմից հայտի ներկայացումը:

Բացի վերը նշվածը, ցանկանում ենք նաև նշել, որ Պատվիրատուն գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրով փաստացի սահմանել է Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշներ, որը տեխնիկական բնութագրում իրավասու չէր արտացոլելու: Տվյալ դեպքում, եթե Պատվիրատուն ցանկանում էր նման չափանիշ նշելու, ապա պարտավոր էր կիրառել գնման այլ ձև, նշելով նաև համապատասխան գնահատման համար համապատասխան բանաձևի կիրառումը:

Վերոնշյալները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի խախտումներ, քանի որ գնման ընթացակարգի հրավերով Պատվիրատուի կողմից ըստ էության սահմանվել է այնպիսի որակավորման չաւիանիշներ, որոնք խտրական են, չեն բխում օրենքի սկզբունքներից, հավասար պայմաններ չեն ապահովում և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների և մեր կազմակերպության համար: Խանդրում ենք հաշվի առնել ներկայացված բողոքի լրացումը և պարտավորեցնել «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված թիվ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:»:

3. <u>ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7046-2022 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից 20.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 02.05.2022թ.-ի թիվ ԵԳ/0343-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը հայտարարել է ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԱ-22/28 մրցույթը՝ նպատակ ունենալով մինչև ընթացիկ տարվա ավարտն ունենալու ՀՀ-ում սուր վարակիչ հիվանդություններով ապրող անձանց որակյալ, միջազգային նորմերին բավարարող տվյալների պահոց, ինչպես նաև ամբողջությամբ թվայնացնել բուժառուների հիվանդանոցային ու արտահիվանդանոցային փաստաթղթաշրջանառության ողջ գործընթացը:

«Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը վերաբերում է հրավերով սահմանված այն պահանջին, համաձայն որի «մասնակիցը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է առողջապահության ոլորտում նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման առնվազն մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից»:

Դիտարկում 1: Հայտատուի առողջապահության ոլորտի փորձառության պահանջը խիստ կարևոր ու սկզբունքային է, քանի որ, մասնավորապես տեղական ինքնակառավարման կամ հանրակրթության ոլորտում ունեցած փորձառությունը ոչնչով չի օգնելու հասկանալ «հիվանդության պատմագիր», «ՀՈՎ դողորայք» կամ «Օպորտունիստական հիվանդություն» եզրույթները: Հարկ է ընդգծել, որ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը հանդիսանում է ՄԻԱՎ-ի հաստատման երկրում միակ ռեֆերենս լաբորատորիա, ինչը շատ ավելի է ընդգծում առողջապահության ոլորտում համապատասխան փորձառության առկայության կարևորությունը, քանի որ բացի ընդհանուր առողջապահության ոլորտային, տերմինաբանական, աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների, առողջապահության ոլորտի շատ ավելի խորքային գիտելիքներ են պահանջվելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող փաստաթղթավորման, հաշվետվողականության, պացիենտների վարման, տվյալների կառուցման ու պահպանման գործընթացները հասկանալու համար:

Դիտարկում 2: Բողոքաբերի բողոքի մասնավոր ոլորտին վերաբերող դրույթները լիովին անհիմն են ու ոչ փաստարկված, քանի որ գնման առարկայի տեխնիկական

բնութագիրը ամենևին չի սահմանափակել մասնավոր ոլորտում ունեցած փորձառությունն օգտագործելու հայտատուի հնարավորությունն ու իրավունքը, քանի որ, ինչպես գիտենք, առողջապահության ոլորտն իր մեջ ներառում է ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր բուժհաստատություններ:

Դիտարկում 3: Բողոքի՝ գնային առաջարկի առնվազն 50 տոկոսի չափով իրականացված պայմանագիր ունենալու պահանջը չէր կարող ստեղծել խտրական և ոչ մրցակցային միջավայր, քանի որ նման պահանջ սահմանելիս Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնն աչքի առաջ ուներ հայաստանյան առնվազն երեք կազմակերպություններ, որոնք բավարարում են նշված պահանջին և բնականաբար ազատորեն կարող էին հավակնել մրցույթի մասնակցությանը: Հայտի նախագծման ժամանակ տվյալ դրույթը սահմանվել է նույնպես ընդգծելու ու կարևորելու համար տվյալների նմանատիպ պահոցների ստեղծման էականությունը հայտատուի ընդհանուր փորձառության մեջ: Միաժամանակ, այս պահանջը նաև բացառելու է անհիմն ու չփաստարկված բարձր գնային առաջարկ ներկայացանելու հայտատուի հնարավորությունը:

Հարկ է նաև նշել, որ դատաբազայի ստեղծման աշխատանքները ֆինանսավորվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի շրջանակներում և, եթե Հայաստանը չհասցնի ունենալ տվյալների էլեկտրոնային կառավարման համակարգ այդ ծրագրի ընթացքում (այս պահին պայմանագրի ավարտը սահմանված է 2022 թվականի դեկտեմբերի 31-ը), հնարավոր է զրկվի այդ ֆինանսական միջոցներից և, հետևաբար, տվյալների էլեկտրոնային կառավարման համակարգ ունենալու հնարավորությունից:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.04.2022թ.-ին հայտարարվել է «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4.1-րդ կետով սահմանվել է, որ մասնակցի հայտի գնահատումը իրականացվելու է հետևյալ չափանիշներով և կարգով.

Մասնակցի հայտի գնահատման առավելագույն չափ է սահմանվում 100 միավորը:

	ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
		ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ
1	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ=** ՏԱ1+ՏԱ2+ՏԱ3**)** (Մասնակցի նմանատիպ փորձառություն (ՏԱ1+ՏԱ2), Աշխատակազմ (ՏԱ3)	70 %
2	**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ)**	30 %

Հ/Հ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների չափանիշներ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների գնահատման (չափման) առավելագույն միավորներ	Գնահատման համար սահմանված պահանջներ
1	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ) - 100 միավոր**		
	այդ թվում		
1.1	***Մասնակցի նմանատիպ փորձառություն (ՏԱ1)***	*32 միավոր*	Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ, Մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող **3 տարիների** ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է **առողջապահության ոլոտում նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման** առնվազն **մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից:**
1.2	***Մասնակցի նմանատիպ փորձառություն (ՏԱ2)***	*20 միավոր*	Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ, Մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող **3 տարիների** ընթացքում պատշաճ ձևով **իրականացրել է իրական ժամանակում գործող նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման** առնվազն **մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի քսան տոկոսից:**

1.3	**Աշխատակազմ (ՏԱՅ)***	48 միավոր	«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «48» միավոր՝ լավագույն առաջարկ: Աշխատակազմի գնահատման նվազագույն շեմը սահմանվում է **30 միավոր**: Նվազագույն միավորը ստանում է աշխատանքային ռեսուրսների գնահատման արդյունքում բոլոր մասնագետների հրավերով սահմանված նվազագույն պահանջներին բավարարելու դեպքում՝ **հակառակ դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար: (այդ թվում լրացվում է սույն հրավերի Հավելված N 1.1-ը և կից աղյուսակը):**
2	**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ)**		
2.1	**Գնային առաջարկ (ԳԱ)* ***	100 միավոր	Մասնակցի գնային առաջարկը դիտարկվում է ոչ գնային պայմանների գնահատման համատեքստում՝ բացառելով վերջինիս էական ազդեցությունը ընկերությունը հաղթող ճանաչելու գործընթացում:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել թվով 1 (մեկ) մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից 20.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում գնային պայմանի համար սահմանվող չափանիշը չի կարող պակաս լինել քսան և ավել երեսուն միավորից:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Ըստ այդմ՝ խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը պետք է ներառված լինեն գնման հայտը կազմած ու հաստատած պատասխանատու ստորաբաժանման կողմից այնպես, որ ապահովվի ու պահպանվի Օրենքի 13-րդ հոդվածի դրույթներով սահմանված սկզբունքները:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ծրագրային ապահովման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.04.2022թ.-ին

հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4.1-րդ կետով սահմանվել են մասնակցի հայտի գնահատման մի շարք չափանիշներ և կարգեր. Մասնավորապես՝ որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է առողջապահության ոլոտում նմանատիպ տվյալների բազայի կառավարման համակարգերի ներդրման առնվազն մեկ պայմանագիր, որի գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված

յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով և գնահատելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմաններն ու բողոքարկման կողմերի կողմից ներկայացված ապացույցները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պայմանների մասով թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջները կազմված են և համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածի, Կարգի 21-րդ և 22-րդ կետերի

դրույթներին, հրավերում առկա պայմանները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ կազմված և հաստատված Ընթացակարգի հրավերի պահանջները չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման՝ նշված դրույթներին:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը

պետք է փոփոխել՝ համապատասխանեցնելով Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆայնթեք» ՍՊԸ-ի կողմից 20.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/72 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԳԼ-22/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**